

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՐ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

<< 21>> մարտի 2016-թ.

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 2016 թվականի փետրվարի /ամիսը/22-ի/օրը/ N27 որոշումը՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա. Հովհաննիսյանի, աշխատանքային խմբի անդամներ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ա. Մարտիրոսյանի, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Գ. Գևորգյանի, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին – մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանի ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ա.Հովհաննիսյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների և հողօգտագործման բնագավառների նկատմամբ ՀՀ Արմավիրի մարզի Արտաշար համայնքում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արածանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. ՀՀ Արմավիրի մարզի Արտաշար համայնքի ղեկավարի կողմից վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չեն եղել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

«05» փետրվարի 2014թ. N 9-Ն

«23» դեկտեմբերի 2013թ. N 429-Ն

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728  
հրամանագրի 1.37 կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ.

1. Հաստատել հողօգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից  
իրականացվող վարչական հսկողության հարցաշարը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

\_\_\_\_\_ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

\_\_\_\_\_ Ե. ԶԱԽԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի

2014 թվականի փետրվարի 5-ի N9-Ն

և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի

2013 թվականի դեկտեմբերի 23-ի N429 -Ն

համարեղ հրամանով

Վարչական Հսկողության Հարցաշար

Հողօգտագործման բնագավառում

**1. Գործառույթը. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի ղեկավարը՝**

- 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կազմում է համայնքների հողերի օգտագործման սխեմաներն ու ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.
- 2) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանած պայմաններով, սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն համարվող հողամասերը.
- 3) օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.
- 4) օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:
- 5) սահմանված կարգով իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը.
- 6) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան՝ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն համարվող հողամասերը.
- 7) սահմանված կարգով ապահովում է համայնքի տարածքում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանությունը:

**2. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝**

Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգիրք», «Հողերի օգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենք, «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշում ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշում, ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշում, «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1134 որոշում:

<i>Դրույթների անվանումը</i>	<i>Պահպանված է</i>	<i>Թերի է Պահպանված</i>	<i>Պահպանված չէ</i>	<i>Հայտնաբերված խախտումները</i>	<i>Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերջման վերաբերյալ</i>	<i>Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները</i>
<p>1. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն համարվող հողամասերը օտարվում կամ օգտագործման են տրամադրվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանաձև պայմաններով</p>	Գործառույթ չի իրականացվել					
<p>2. Համայնքի ավագանին ընդունում է համայնքի վարչական սահմաններում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի <u>օտարման, անհատույց (մշտական) օգտագործման և կառուցապատման</u> իրավունքով տրամադրմանը համաձայնություն տալու վերաբերյալ որոշում՝ նշելով հողամասի (հողամասերի) գտնվելու վայրը, չափերը, օգտագործման սահմանափակումները, պայմանները:</p>	Գործառույթ չի իրականացվել					
<p>3. Համայնքի ղեկավարը պատրաստում է հողաշինարարական գործ, որում ներառվում են համայնքի ավագանու որոշումը, տեղանքի կադաստրային քարտեզը, որտեղ նշվում են օտարման, անհատույց (մշտական) օգտագործման և կառուցապատման իրավունքով տրամադրման ենթակա հողամասերը, դրանց շրջադարձային կետերի կոորդինատներն ու չափերը, հողամասի օգտագործման սահմանափակումների մասին</p>	Գործառույթ չի իրականացվել					



<p>տեղեկանքը, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներում ընդգրկված լինելու վերաբերյալ տեղեկանքը, և ներկայացնում մարզպետին:</p>						
<p>4. Դրական եզրակացության առկայության դեպքում՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխության անհրաժեշտության բացակայության դեպքում համայնքի ղեկավարը Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ սահմանված կարգով իրականացնում է հողամասերի օտարումը, անհատույց (մշտական) օգտագործման կամ կառուցապատման իրավունքով տրամադրումը:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>5. Հողամասերն <b>օտարվում</b> են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով՝ սեփականության իրավունքն <b>անհատույց</b> փոխանցելու, <b>ուղղակի վաճառքի</b> միջոցով, <b>աճուրդով</b>, <b>փոխանակության</b> միջոցով:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>6 Հողամասերը սեփականության իրավունքով <b>անհատույց</b> տրամադրվում են՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված դեպքերում ու կարգով և օրենքով նախատեսված այլ դեպքերում:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>7. Քաղաքացիներից դիմումներն ընդունվում են հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու մասին տեղեկատվության հրապարակման օրվանից մեկ ամսվա ընթացքում, որից հետո հինգ օրում ամփոփվում են ընդունված դիմումները:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>8. Դիմումների ամփոփման արդյունքների հիման վրա և մեկ հողաբաժնի համար ընդունված չափով ճշտվում են պահանջվող հողամասերն ըստ նպատակային ու գործառնական նշանակության՝</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					

<p>1) գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու, 2) որպես տնամերձ հողամաս օգտագործելու կամ անհատական բնակելի տան կառուցման ու սպասարկման համար:</p>					
<p>9. Հողամասերն անհատույց տրամադրվում են՝ համայնքի վարչական սահմաններում՝ համայնքի ղեկավարի կողմից (համայնքի ավագանու համաձայնությամբ):</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>10. Հողամասերի <b>ուղղակի վաճառքը</b> կատարվում է՝</p> <p>1) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում, ինչպես նաև էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների, ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների (շենքեր, շինություններ, այլ օժանդակ կառույցներ) կառուցման համար հողամասերի տրամադրման դեպքում.</p> <p>2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ բնակելի շենքերը, շինությունները բնակելիի վերափոխելու արդյունքում ձևավորված բնակելի տների պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերն օտարելիս.</p> <p>3) գոյություն ունեցող բնակելի, հասարակական, արդյունաբերական և այլ նշանակության օբյեկտների, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման համար, եթե հնարավոր չէ լրացուցիչ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>11. Հողամասերի ուղղակի վաճառքի գինը սահմանվում է տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված հողամասերի, որոնք օտարվում են հողամասի՝ տվյալ պահին գործող</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				

կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով:						
<p>12. Հողամասերն <u>աճուրդային</u> կարգով օտարվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներով, հրապարակային սակարկությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, դասական աճուրդով:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>13. Հողամասերի աճուրդի կազմակերպման փաթեթում ներառվում են օրենքով և սույն կարգով սահմանված՝ անհրաժեշտ հետևյալ փաստաթղթերը՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) օտարման պայմանագրի նախագիծը.</li> <li>2) օտարվող հողամասի հատակագծի նախագիծը.</li> <li>3) քաղաքաշինական գործունեության համար նախատեսվող հողամասերի համար սահմանված կարգով կազմված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը՝ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված քաղաքաշինական, բնապահպանական և այլ բնույթի պահանջների և սահմանափակումների, ելակետային տվյալների ու տեխնիկական պայմանների ամրագրմամբ, այդ թվում՝ հողամասի նկարագրությունը (կողմնորոշումը, թեքությունը, բարեկարգման վիճակը, հաղորդակցուղիների և իրացման ենթակա կառույցների առկայությունը), շինարարության սկզբի և ավարտի ժամկետները:</li> </ol>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>14. Աճուրդի արդյունքների ամփոփումից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 12-օրյա ժամկետում աճուրդի կազմակերպիչը հաղթողին տրամադրում է հողամաս տրամադրելու վերաբերյալ լիազորմարմնի որոշումը, օտարման պայմանագիրը, օտարված հողամասի հատակագիծը, իսկ քաղաքաշինական գործունեության համար նախատեսվող հողամասերի համար նաև՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					

<p>15. Գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդի դեպքում մեկ լոտով օտարվող հողամասի առավելագույն չափը չի կարող 20 հեկտարից ավելի լինել, իսկ նվազագույն չափը չի կարող պակաս լինել տվյալ համայնքում սեփականաշնորհված հողաբաժնի չափից, եթե համայնքի հողերի օգտագործման սխեմայով այլ չափ նախատեսված չէ:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>16. Աճուրդը կազմակերպում է համայնքի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված՝ աշխատակազմի պաշտոնատար անձը:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>17. Աճուրդի անցկացման ձևի մասին նշվում է աճուրդի իրականացման մասին ծանուցման մեջ:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>18. Աճուրդին մասնակցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝  1) հայտ՝ նշելով հողամասի ձեռքբերման նպատակը.  2) աճուրդին մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիր.  3) անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>19. Եթե աճուրդը չի կայանում մեկ հայտ ներկայացնելու պատճառով, ապա հողամասն ուղղակի վաճառքի միջոցով կարող է օտարվել առաջին հերթին աճուրդի մասնակցության հայտ ներկայացնողին, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ տվյալ համայնքի բնակիչներին՝ աճուրդի արդյունքների ամփոփումից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված 10-օրյա ժամկետում:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>20. Հողամասերը <b>փոխանակվում են</b> քաղաքացիների կամ իրավաբանական անձանց դիմումների հիման վրա կամ համայնքի ղեկավարի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>21. Պետական սեփականություն հանդիսացող հողամասերը փոխանակվում են Հայաստանի Հանրապետության մարզպետների (Երևանում՝ Երևանի քաղաքապետի) կողմից, եթե չի փոխվում հողամասի նպատակային նշանակությունը:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				

<p>22. Հողամասերի փոխանակության մասին որոշման ընդունումից հետո կողմերի միջև կնքվում է հողամասերի փոխանակության մասին պայմանագիր, որին կցվում են փոխանակվող հողամասերի սահմանված կարգով կազմված հատակագծերը:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>23. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածին համապատասխան՝ հողամասերն <b>անհատույց (մշտական) օգտագործման</b> իրավունքով տրամադրվում են՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) պետական և համայնքային հիմնարկներին ու կազմակերպություններին.</li> <li>2) բարեգործական, հասարակական միավորումներին և հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար.</li> <li>3) օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում:</li> </ol>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>24. Հողամասն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է առանց մրցույթի:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>25. Հողամասն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու համար կազմվող հողաշինարարական գործում լրացուցիչ ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հողամաս ձեռք բերելու մասին լիազորված մարմնի որոշումը.</li> <li>2) քաղաքաշինական գործունեություն իրականացնելու դեպքում ֆինանսական միջոցներով ապահովված լինելու մասին տեղեկանք՝ տրված համապատասխան բանկի կողմից.</li> <li>3) պահանջվող հողամասն այլ հողօգտագործողի տիրապետման տակ գտնվելու և նրա կողմից օգտագործվելու դեպքում՝ նաև հողօգտագործողի գրավոր համաձայնությունը, որը ենթակա է նոտարական վավերացման (եթե հողօգտագործողը քաղաքացի է):</li> </ol>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					

<p>26. Ներկայացված փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից մեկամսյա ժամկետում ընդունվում է որոշում և, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 686-րդ հոդվածին համապատասխան, կնքվում հողամասն անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>27. Հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերից:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>28. Հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարվանից ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում, վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս նախապատվության իրավունք ունի:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>29. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հողամասերը վարձակալության տրամադրվում են մրցույթով</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>30. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է հետևյալ նպատակներով՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու,</li> <li>2) ընդհանուր օգտագործման տարածքները (գրոսայգիներ, պուրակներ, ավտոկայանատեղեր)՝ դրանց նշանակությանը համապատասխան շահագործելու և բնակչությանը ծառայություններ մատուցելու,</li> <li>3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով օգտագործելու համար, ինչպես նաև պետական և համայնքային</li> </ol>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					

<p>սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության պայմանագրերի գործողության ընթացքում կամ դրանց գործողության ժամկետներն ավարտվելուց հետո վարձատուի կողմից պայմանագրերի ժամկետները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետներով երկարացվելու դեպքում:</p>						
<p>31. Վարձակալության իրավունքով տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա կարող են կառուցվել միայն գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր և շինություններ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերին համապատասխան:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>32. Հողամասերի կառուցապատման իրավունքը տրամադրվում է միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածով սահմանված նորմերին և կանոններին համապատասխան՝ մրցութային կարգով՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝</p> <p>1) մինչև 20 քառ. մետր մակերեսով ավտոտնակների, կրպակների, առևտրի և սպասարկման այլ օբյեկտների համար.</p> <p>2) տրամադրված հողամասերի ընդլայնման անհրաժեշտության դեպքում, եթե լրացուցիչ տրամադրվող հողամասը հնարավոր չէ որպես առանձին միավոր տրամադրել մրցութային կարգով.</p> <p>3) բարեգործական, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար.</p> <p>4) էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների, ինչպես նաև</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					

<p>ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների (շենքեր, շինություններ, այլ օժանդակ կառույցներ) կառուցման համար.</p> <p>5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված հողամասի մի մասն այլ հողօգտագործողի տրամադրելու դեպքում՝ նախկին հողօգտագործողի իրավունքները սահմանված կարգով դադարեցվելուց հետո.</p> <p>6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց կամ քաղաքացիներին օգտագործման իրավունքով տրամադրված հողամասերը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ փոխանակման անհրաժեշտություն առաջանալիս.</p> <p>7) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության մարզպետների, Երևանի քաղաքապետի ներկայացմամբ:</p>					
<p>33. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար համայնքների ղեկավարների կողմից ստեղծվում են մրցութային հանձնաժողովներ:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>34. Մրցութային հանձնաժողովներն ստեղծվում են համայնքի ղեկավարի գլխավորությամբ, որոնց կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի համապատասխան մասնագետներ, ավագանու անդամներ և համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>35. Մրցութային հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ:</p> <p>Արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի անդամների, մրցույթում հաղթողի, ցանկության դեպքում՝ նաև մրցույթի մասնակիցների կողմից:</p> <p>Մրցույթի հաղթողին որոշելիս՝</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				



<p>առաջացած հարցերը նշվում են արձանագրության մեջ՝ որպես հատուկ կարծիք: Արձանագրության մեջ նշվում են մրցույթի հաղթողի տվյալները, հողամասի վարձակալության ժամկետները, հողամասի և վարձավճարի (վճարի) չափերը, հողամասի օգտագործման նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի օգտագործման պայմանները, մրցույթի հաղթողին տրվող իրավունքները, ինչպես նաև մրցույթում սահմանված մյուս պայմանները:</p>						
<p>36. Մրցույթում հաղթած անձն արձանագրությունը և (կամ) հողամասի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի պայմանագիրն ստորագրելուց հրաժարվելու դեպքում գրկվում է մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի վարձակալելու (կառուցապատման իրավունք ձեռք բերելու) իրավունքից: Եթե կրկնամրցույթը չի կայանում մեկ հայտ ներկայացված լինելու պատճառով, ապա հողամասը կարող է առանց մրցույթի 10-օրյա ժամկետում տրամադրվել առաջին հերթին հայտը ներկայացնողին, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ հողամասը կարող է տրամադրվել նոր մրցույթ հայտարարելով:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>37. Հողամասերը մրցույթներով տրամադրելու համար վարձավճարի (վճարի) մեկնարկային չափը սահմանվում է համայնքի ղեկավարի կողմից, որը չպետք է պակաս լինի տվյալ հողամասի համար սահմանված հողի հարկի տարեկան դրույքաչափից:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>38. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար կազմվում է հողաշինարարական գործ, որում ներառվում են մրցույթի պայմաններով նախատեսված փաստաթղթերը</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>					
<p>39. Հողային հաշվեկշիռը հողերի ընթացիկ հաշվառման հիման վրա կազմվող յուրաքանչյուր տարվա հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությունն է:</p>	<p><b>V</b></p>					

<p>40. Հողային հաշվեկշիռը բաղկացած է տեքստից և աղյուսակներից: Հողային հաշվեկշռում արտացոլվում է հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի՝ արտահայտված հողամասի մակերեսի ճշտությամբ:</p>	<p>✓</p>					
<p>41. Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշռում արտացոլվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված հետևյալ փոփոխությունները՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) հողի սեփականության ձևի,</li> <li>2) հողի օգտագործման ձևի,</li> <li>3) հողի նպատակային նշանակության,</li> <li>4) հողատեսքերի և դրանց գործառնական նշանակության,</li> <li>5) հողերի իրացման, բարելավման, հողատեսքերի, բազմամյա տնկարկների հիմնման և քանդման,</li> <li>6) ոռոգելի, անջրդի, անօգտագործելի և չորացված հողերի վիճակի, պետական սեփականություն հանդիսացող հողերի շարժի և փոխակերպման (տրանսֆորմացիա),</li> <li>7) նոր անտառատնկումների և անտառահատումների,</li> <li>8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման, օգտագործման և վարձակալության իրավունքով տրամադրման տվյալների:</li> </ol>	<p>✓</p>					
<p>42. Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշիռը կազմում է հողերի պետական հաշվառման տվյալ տարվա ընթացիկ տվյալների հիման վրա՝ հուլիսի 1-ի դրությամբ:</p>	<p>✓</p>					
<p>43. Համայնքի ղեկավարը կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի</p>	<p>✓</p>					

կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման (Երևանի քաղաքապետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի) հետ						
44. Ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 10-ը ներկայացնում համապատասխան մարզպետին (բացառությամբ Երևանի քաղաքապետի):	✓					
45. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը հաստատվելուց հետո համայնքների ղեկավարները և մարզպետները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հողերի հաշվառման համապատասխան գրքերում լրացնում են հաստատված տվյալները:	✓					
46. Համայնքի վարչական սահմաններում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանություն:	✓					
47. Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանության ենթակա են՝ 1) պետական գեոդեզիական ցանցի կետերը՝ ա) պետական (ազգային) պլանային գեոդեզիական ցանցի կետերը, դրանց կենտրոնները, արտաքին նշանները, կողմնորոշիչ կետերը. բ) պետական (ազգային) բարձունքային գեոդեզիական ցանցի կետերը, հիմնային, գրունտային, ժայռային, պատային հենանշանները (ռեպերները) և մակնիշները. 2) գրավիմետրիական ցանցի կետերը, դրանց կենտրոնները, ուղեկից կետերը և ստուգողական հենանշանները. 3) հատուկ գեոդեզիական ցանցերի կետերը՝ դրանց արտաքին նշանները, կենտրոնները, ստուգողական մակնիշները:	✓					
48. Հողամասերը, որոնց վրա տեղակայված են գեոդեզիական կետերը, համարվում են գեոդեզիական կետերի պահպանման և սպասարկման գոտիներ և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 49-րդ.	✓					

<p>հողվածի 6-րդ կետին և 50-րդ հողվածի 7-րդ կետին համապատասխան՝ ենթակա են գրանցման որպես սերվիտուտ:</p>					
<p>49. Շենքերի պատերին, շինությունների վրա և նման տեղերում տեղադրված գեոդեզիական կետերի համար սահմաններ չեն որոշվում: Այդ դեպքում պահպանման ենթակա է անմիջապես կետը, պատային նշանը կամ հենանշանը (ռեպերը):</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>50. Համաձայն «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ գեոդեզիական կետերի պահպանության ապահովումը համայնքի վարչական սահմաններում իրականացնում է համայնքի ղեկավարը:</p>	<p><b>Վ</b></p>				
<p>51. Պահպանության են հանձնվում բոլոր նոր տեղադրված և նախկինում պահպանության չհանձնված տեղագրագեոդեզիական աշխատանքների կատարման ժամանակ հետազոտված ու վերականգնված գեոդեզիական կետերը:</p>	<p><b>Վ</b></p>				
<p>52. Գեոդեզիական կետերի պահպանության հանձնումը ձևակերպվում է սահմանված ակտով (ձև N 2): Ակտը կազմվում է 2 օրինակից՝ գեոդեզիական կետերը պահպանության հանձնվող կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ և կնիքով, եթե կազմակերպությունը կնիք ունի: Ակտին կցվում է գեոդեզիական կետերի ցանկը՝ տեղադիրքի նկարագրությամբ:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>53. Գեոդեզիական կետերը պահպանության հանձնելու մասին ակտի առաջին օրինակը մնում է աշխատանքը կատարած կազմակերպությունում՝ հետագայում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե հանձնելու համար, իսկ երկրորդը՝ համայնքի ղեկավարի մոտ:</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				
<p>54. Մի հողօգտագործողից մյուսին հողամասերի նկատմամբ իրավունքի փոխանցման դեպքում նախկինում</p>	<p><b>Գործառույթ չի իրականացվել</b></p>				

<p>պահպանության ընդունված գեոդեզիական կետերը հանձնման ակտով փոխանցվում են նոր հողօգտագործողին: Հանձնող կողմը կետերի հանձնման ակտի մի օրինակն ուղարկում է կադաստրի պետական կոմիտե:</p>					
<p>55. Գեոդեզիական կետերի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացվում է կադաստրի պետական կոմիտեի կողմից:</p>	<b>Վ</b>				
<p>56. Պետական գեոդեզիական ցանցի կետերը քանդվում կամ տեղափոխվում են միայն կադաստրի պետական կոմիտեի համաձայնության դեպքում:</p>	<b>Չի իրականացվել</b>				
<p>57. Գեոդեզիական կետերի (կենտրոնների, արտաքին նշանների, ռեպերների, կողմնորոշիչ կետերի) ոչնչացում կամ վնասում հայտնաբերվելու դեպքում, համայնքի ղեկավարի կողմից կազմվում է ակտ, որտեղ նշվում են վնասվածության բնույթը, ինչպես նաև վնասման կամ ոչնչացման պատճառները:</p>	<b>Չի իրականացվել</b>				
<p>58. Գեոդեզիական կետերի ոչնչացման կամ վնասվածության մասին ակտը կազմվում է 2 օրինակից: Առաջին օրինակն ուղարկվում է կադաստրի պետական կոմիտե, երկրորդը մնում է համայնքում:</p>	<b>Չի իրականացվել</b>				
<p>59. Գեոդեզիական կետերի միտումնավոր ոչնչացման կամ վնասման դեպքում ակտի պատճենը փոխանցվում է իրավապահ մարմիններին՝ մեղավոր անձանց Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար:</p>	<b>Չի իրականացվել</b>				

Հ Ր Ա Մ Ա Ն

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

-----

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728  
հրամանագրի 1.37 կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ Հայաստանի  
Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը՝ համաձայն հավելվածի:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ՀՀ փոխվարչապետ, տարածքային

կառավարման նախարարի

2014 թվականի մարտի -ի

թիվ -Ն հրամանով

**Վարչական Հսկողության Հարցաշար**  
**Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից**  
**իրականացվող**

I Համայնքի ավագանու գործառույթը՝

1. Համայնքի ավագանին Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք /այսուհետ՝ՏԻՄ/ օրենքով սահմանված կարգով՝

- 1) ընդունում է իր կանոնակարգը ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան.
- 2) հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը.
- 3) հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.
- 4) որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարիներկայացմամբ.
- 5) որոշում է համայնքի ղեկավարի վարձատրության չափը.
- 6) օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.
- 7) իր որոշմամբ համաձայնություն է տալիս համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին.
- 8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերը: Այդ մարմիններում ավագանու առաջադրած ներկայացուցիչների թիվը կարող է լինել միայն կեսից պակաս.
- 9) օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.
- 10) սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.
- 11) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը:
- 12) որոշում է կայացնում համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակառուցվածքային կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ.
- 13) իր որոշմամբ վավերացնում է Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների համայնքների հետ համագործակցելու մասին պայմանագրերը: Համայնքների գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով որոշում է կայացնում համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամության վճարները մուծելու մասին.
- 14) համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, աշխատակիցների քանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ:

- 15) Համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և (կամ) հաստիքացուցակը հաստատելու, ինչպես նաև փոփոխելու և (կամ) լրացնելու հարցում որոշում է կայացնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին դիմելու մասին: Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և (կամ) հաստիքացուցակը հաստատված, ինչպես նաև փոփոխված և (կամ) լրացված է համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.
- 16) որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.
- 17) հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը.
- 18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին.
- 19) հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.
- 20) քննարկում է Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության և այլ իրավասու պետական մարմինների իրականացրած ստուգումների արդյունքները և իր իրավասության շրջանակում դրանց վերաբերյալ ընդունում է որոշում.
- 21) քննարկում և որոշում է կայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.
- 22) քննարկում և որոշում է կայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ:
- 23) Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ և ուղերձներ: ՏԻՄ օրենքով սահմանված դեպքերում ավագանին կազմում է արձանագրություններ:
- 24) Համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ:
- 25) Համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորում են համայնքի ղեկավարն ու ավագանու անդամները՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն տաս օր առաջ ներկայացրած գրավոր հարցերից:
- 26) Համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ՝
  - ա) աշխատել նույն աշխատակազմում, համայնքի բյուջետային հիմնարկներում, լինել համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավար.
  - բ) լինել համայնքի ղեկավար.
  - գ) աշխատել իրավապահ, պետական անվտանգության և դատական մարմիններում:
  - դ) Օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև զինված ուժերում ծառայելու կամ ծառայության անցնելու դեպքերում համայնքի ավագանու անդամը պարտավոր է մինչև ավագանու հերթական նիստը գրավոր հրաժարվել ավագանու անդամությունից, հակառակ դեպքում նրա լիազորությունները դադարեցվում են:
- 27) Համայնքի ավագանու անդամը օրենքով սահմանված կարգով պարտավոր է՝

ա. Համայնքի ավագանու անդամը պարտավոր է իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և համայնքի բարօրությանն ուղղված համոզումներով:

բ. մասնակցել ավագանու նիստերին.

գ. պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, համայնքի ընտրողներին տեղեկացնել համայնքի ավագանու աշխատանքների մասին.

դ. մասնակցել ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություններին.

ե. ավագանու կանոնակարգով սահմանված կարգով անդամակցել ավագանու որևէ մշտական հանձնաժողովի, մասնակցել դրա նիստերին.

զ. օժանդակել համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանը.

է. չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին.

ը. անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել ավագանուն կամ համայնքի ղեկավարին.

թ. ստորագրել իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերը:

28) Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի կանոնադրություն, որը հաստատում է համայնքի ավագանին:

29) Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք:



Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերցման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
1. Համայնքի ավագանու կողմից ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան ընդունված իր կանոնակարգի առկայություն:	✓					
2. Համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի զարգացման ծրագրի առկայություն:	✓					
3. Համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի բյուջեի առկայություն:	✓					
4. Համայնքի բյուջեի փոփոխությունների դեպքում համայնքի ավագանու կողմից հաստատման առկայություն:	✓					
5. Համայնքի ավագանու կողմից հաստատված բյուջեի կատարման տարեկան հաշվետվության առկայություն:	✓					
